

ԲԱՅԱՆՈՐԴԱԿՈՒԹԻՒՆ

Պաշտոնային համար սահմանակալ 10 գրանկ. վեճակակալ 5 գրանկ. Արսասանակալի համար սահմանակալ 12 գրանկ. վեճակակալ 6 գր.

ԿԱՆՈՒԿ ԿՃԱՐՆԵԼԻ

Գրութիւնք և սակ տրուի:

Իրանացական տողը 20 սանրիս և:

Գին 10 ՍԱՆԹԻՄ

ՇՄԱԼԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐ ԵՒ ՉՈՐԵՔԻՆԻ ԵՒ ՇՄԱԼԻ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ. Адвокатъ

Նախակ և գրավ գրկիչ
Խմբագրութեան հասցիքն.

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie).

Գին 10 ՍԱՆԹԻՄ

ԱՅԼԱՍԵՐՈՒՄ

—)(—

Ար Բարիդի թղթակիցը յօդուած մը գրելով մեզ դառնապէս կը դանդաղէ այն ամուսնութիւններուն դէմ, զորս հայ արժանաւոր երիտասարդներ կը կնքեն օտարազգի աղջիկներու հետ, ֆրանսացի, հրեայ և այլն: «Բարիդի հայ գաղութը արդէն վարակուած է այս արտո՞ւթ օտարի հետ կապուած այս ամուսնութիւններէն ծնած աղաքի բնից մայրերն լեզուէն բառ մը իսկ չեն զխոնար: Այս վատ սովորութիւն մէկ քանի տարի դադար առաւ, բայց վերջին ժամանակներս դարձեալ սկսաւ, և շատ սաստիկ կերպով. համարտարանական կրթութիւն ստացող զարգացեալ հայ երէտասարդներ ընտանեկան շրջանակ կը կազմեն օտարուհիներու հետ կապելով իրենց կեանքը: Վերջին 7—8 ամիսներու մէջ այս կարգի քաղաքային չորս ամուսնութիւններ սեղի ունեցան: Կարգուող երիտասարդները Պոլսոյ ծանօթ ընտանիքներու զաւակներ են...»

Անհատապէս ի՞նչ նպատաւոր և փայլուն պայմաններու մէջ ալ կնքուած ըլլան այս ամուսնութիւններ, հայ ազգային գոյութեան տեսակէտով չեն զարգրել կա՛ծոտ երեւոյթ մը ըլլալէ՛ մանաւանդ ներկայ ժամանակամիջոցին մէջ, ուր հայը ամէն ատենէ աւելի ամբապնդ մնալու պէտք ունի իր կրօնքին, իր լեզուին, իր խոցուած արիւնլուայ տոհմին:

Օտարութեան անծայր ովկէանին մէջ մէկիկ մէկիկ, անզգալապէս սուղուած անհատականութիւններ իրարու քով բերուելով անտարակոյս ուժ մը, կեանք մը կը ձեւացնեն: Ինչո՞ւ մեր ամենէն շատ, ուժասպառ, հիւանդոտ վայրկեանին զրկուինք անոնցմէ: Օտար միջավայրի հետ ձուլուող հայ մը, որքան տրամադիր ըլլայ փարած մնալու իր սոհմային բարքերուն, որքան ճիգ թափէ իր յաջորդներուն ներշնչել ազգայնութեան ոգին,

անյաջողութեամբ միայն պիտի պատկանի իր բոլոր ջանքերը, ու այլասերուած իր սերունդին վրայ այնքան պիտի ճնշէ որ օրին մէկը հայութեան փտարն իսկ չպիտի գտնեն այն ընտանիքին մէջ սրուն հիմադիրն եղած է հայ մը:

Այսօր չորս հայ երիտասարդ Բարիդի մէջ, միս օր Լոնտոնի մէջ, որիչ օր Ամերիկայի բաւելիին մէջ, ու այսպէս շարունակաբար, քիչ քիչ, աննշմարելի կերպով, այնքան տարողունած որ ուշագրութիւն իսկ չի գրուեր, կերթան կը կորսուին անդարձ, յափշտակուած անհատիկ միջավայրերէ, տղրելու, կեանքը ըմբռնելու անդ լիմադրելի փորձութեամբ արտրուած: Յուսովն մանաւանդ ան է որ օտարութեան զոգցած այս հայերը ընդհանրապէս մեր ազգին բերնոտարուած, հիւսնեղ մասը կը ներկայացնեն, ուժեր որոնցմէ մեծապէս պիտի օգտուէր թէ՛ մեր ներկայ սերունդը և թէ՛ մանաւանդ զաւրճ սերունդը:

Ազգասիրութեան կամ հայրենասիրութեան գաղափարին ամենէն աւելի հիմակ պլլուելու ենք, ու ոչ միայն ողբալ ու ափսոսալ հարկ է գաղութներու, ժողովուրդի մեծ զանգուածներու կորուստը, հապա վերջին ծայր բժանդիլը ըլլալու է մինչև իսկ հայ անհատական կորուստներու համար, որոնք աւելի ծանրակշիռ ու կօկծալի կը դառնան՝ անհատին անձնական արժանիքին բարձրութեամբը:

ՇՄԱԼԻ

ՔԱՆԻ ՍԸ ՔԱՅԼ ՅԱՌԱՋ

Թէ ի՞նչու կամ ի՞նչպէս ուշագրութեան տարակոյս կզան արփարեան Հարչախնոքեան թուղթերը: Արփար Լֆէնտի կրէ թէ, «Պոլսոյ ծանօթ էր 90ի ամէն մէկ բանտարկուողի ձեռքակալութեան պատճառը. ստիկանատան մէջ տրուած քննութիւնները ամէն սեղ հոշակուած էին»: (Մատ 20 նոյմ. 1897): Ու զժրխատար Պոլսեցիք լաւ կը

յիշեն որ, այն թուականին, շատ աննպատակ տարածայնութիւններ կան միայն ու միայն իր մասին: Չերպի Արմենին ալ նոր յաւելումներ ըրաւ արդէն իսկ խօսուածներուն վրայ: Հասնքը անդին էր. ես միայն թուած կը կանգնէի անոր դէմ:

Աս մէկ: Սուլթանի առաջին ներման ժամանակ վախճուէն աւելի բանտարկուելու արձակուեցան (4 յուլ. 1891): Ասոնց մէջ էին Տատեան Երկու հարազատներ, Վահրամ ու Տրդատ պէյերը, Տօթթ. Թիրեաքեան, հանրածանօթ մարդ մը, և, ինչ որ ամէն բանէ աւելի կարեւորութիւն ունէր, Ատենապետ Ազգ. Երեսփոխանական ժողովի Ատենք ամենքը Պատրիարքարան տարուեցան, և, պաշտին ու պատրիարքին մէջ եղած կանխորոշ համաձայնութեան մը համեմատ, Յայր սոճարին մէջ «Տրամարիմք ի ստատանայ» հրատարակային կրթութիւն կնթարկուեցին անոնց բացառութեան ամենքն ալ, ու յետոյ զրկուեցան իրենց ստանդարտ Արփար Լֆէնտի արձակուած չէր: Այլ ինչ, պաշտին իրեն զրկուած ցանկին համեմատ, Արփարը կը փնտռէ ու հարցում կընէ բարեկանութեան նախարարին: — Պիտի արձակուել, կրէ այս վերջինը: Եւ Արփար Լֆէնտի կարձակուել մէկ օր ետքը իրկուեց ու չ ատեն, մասնաւոր կատար մը մէջ, որ իր արամագրութեանը ներքեւ կը գրուի երկու օտարականութիւն: Յաղթական մուտք մը, և «Տրամարիմք ի ստատանայ» կրթութիւն պէտք տեսնուած չէ: Աս երկու:

Ինչպէս արձակուեցին ետքն ալ, շատ չանցած, ստարակներով մէծիտիւններ զրկուեցան բարեկամին: Անկարելի լինչ բան կայ, բարեք այն ատեն, և սակայն մտթի պէս անորոշ պարագայ մըն ալ աս եղաւ: Աս կերք:

Տրամարիմք գրուած նամակին պատճենով: գրողը Արեա զրկուեցաւ, ու Արփար Լֆէնտի, որ մասնաւոր կը լինէ անոյ իրքեւ կարեւորագոյն մէկը, կարձակուել անօք փառօք և, մասնաւոր, պաշտի առաջարկած ու պատրիարքին ընդունած կրթութի ձեւակերպութիւններն բոլորովին ազատ: Աս ալ չորս:

Հիմա, վայրկեան մը ենթադրելով թէ ասոնք չըլլալէք բաներ չեն, կը խորհիմ թէ Արփար Լֆէնտի, թիրեա զրկուած մարդ, հայ թերթի մը խմբագիր, մասնաւոր արարողութեանց չենթարկուեցաւ զուցէ այդ պատճառով: Այս ստարակութեան զօրկուեցան զէմ կեղծին Տատեան Երկու կրթարները, երկուքն ալ բարձր

պաշտօնատարներ և պաշտին հաւատարիմ սան մը երկու շտապիչներ. անոր դէմ կեղծ նոյնպէս Տօթթ. Թիրեաքեանի անդին ժողովրդականութիւնը, գրողի, բժշկի, դերտուի, լեզուագէտի համարուող, և ասոնցմէ աւելի՛ Ազգ. Երեսփոխանական ժողովի Ատենապետութեամբը, պարագայ մը՝ որ անհամեմատելի է օրագրի մը մէջ պարբերաբար երեցող անհատին հետ: Ուրեմն, բան մը ըլլալու է կրեմ ինքնիրեն, և սեւ կէտերը կը խոչորնան...:

Այս պարագաները, որոնք գրուին թէ չգրուին, անհերքելի իրողութիւններ են, երբեմն, իմ պատահամամբ տեսած Հարցարանին աղերսներ վրայ լոյս մը կը ցրուցեն ու ապամայ ինծի ընդունել կուտան թէ Արփար Լֆէնտի անխղճօրէն իրքեւ մարդապան մատնանիչ ըրած է Վահրամ պէյը, Թիրեաքեանն ալ ձերբախտուած է միայն ու միայն անոր յայտնութիւններովը, սուած մանրամասնութիւններովը: Ու տարակոյս չունիմ թէ Վահրամ պէյը տակաւին այսօր ալ գուցէ ըմբռնած չէ թէ ինչու երեք ամիսէն աւելի տառապեցու բանտին մէջ մինչև որ կայսերական ներուժը վրայ հասաւ:

Բայց Արփար Լֆէնտի կրնայ անարկել թէ համբաւուոր Արմենակին սուրը, որ փաստարան իջիկին կուշտը խուսած էր, Վահրամի անունը կը կրէր փորագրուած: Այո, և սակայն Արմենակը տան աղու մը պէս բան մըն էր եղած Տատեաններու տանը մէջ, այնպէս որ Վահրամ պէյի ունեցած հարիւրաւոր անհատում սուրբէն, որոնք իր անունը կը կրեն փորագրուած, կրնար մէկը ընտրել ու անել առանց ուրիշ մը գիտութեանը: Ուստի, սուրին վրայ գրուած անունը երեք փաստ չէր կրնար ըլլալ հարցաքննութեան մէջ Վահրամ պէյի սուր և փաստարանի լեզուին առջև:

Թիրեաքեանի ձեռքակալութիւններն ու անոր մանրամասնութիւնները՝ որոնք յետոյ պատմուեցան բժիշկին, լուսարանուած տեսայ Հարցարանին մէջ: Հարցարանը, — որչափ որ միտքս միացած է, — կընէր Արփար Լֆէնտի բերնով թէ «Տօթթ. Թիրեաքեանը սարսափելի ընկերութեան մէջ է, անոր գանձապահն է, զրամները անոր կը յանձնուին, հանգանակութեան տետրակները և նուիրատուներուն անունին ցանկը անոր քով է: Եթէ բնակարանը խուզարկուի, ապահով եմ թէ ըսածներս պիտի հաստատուին»: Աս և ասոնց պէս խօսքեր ուրիշ մանրամասնութիւններով ու անուններով: Երբ Հայրենիք սկսաւ ինծի դէմ

գրել ու բժշկին անունն ալ բերնէ բերան պտտեցաւ . Թիրեաքեան խճմարագատուն կերթայ ու կը պատուիրէ որ իր անունին հետ չխաղան Արփիար Էֆէնտի . ասկէց օգտուիլ ուզելով տարածայնից թէ բժշկը չընդունիր որ Արփիար Էֆէնտին զինքը անխղճօրէն մասնանիչ քրած ըլլայ : Ես կը կարծեմ ամենայն իրաւամբ թէ բժշկը նոյն իսկ այսօր ալ իրաւունք չունի այդպիսի յայտարարութիւն մը ընելու . վասն զի . հարցաքննութեան մէջ եղած յայտնութիւնները , մանաւանդ վարձարութիւնով ու զանազան խոստումներով որոացուած յայտնութիւնները , գաղանի կը պահուին : Հակառակը պնդելու համար , հասարակ մահկանացուներու կարգէն դուրս ելլելու է :

Արփիար Էֆէնտի թող պնդէ հակառակը , ես կանցնիմ , առանց վարանելու , յիշատակել զէպք մը : — Հայրենիքի կըռկըններէն ու բարեկամիս խորտըններէն զոնէ երեք ամիս ետքը , օրին մէկը Թիրեաքեանի այցելութեան պայքի մէկ բարեկամիս հետ : Կարգ մը խօսքերու շարքին մէջ , ես ըսի թէ . հարցաքննին համեմատ , բանտարկութեանը ժամանակ , պէտք է իր քովը փնտռուած ըլլայ անուններու եւ նուէրներու ցանկ մը : Ու միեւնոյն ժամանակ աւելցուցի որ ինչի բան մը չըսէ , այլ իր խղճին հետ գատաստանը տեսնէ : Հազիւ թէ այս խօսքերս կաւարտէի . բժշկին է ոտքի ելաւ արթննալու ու ջրային սոսկալի ցնցումով մը .

- Իրա՞ւ կըսես , Հրանդ :
- Այո , Տօքթօր :
- Ծի՛ղի՞ ըսէ :
- Կատակ չեմ ըներ :
- Վա՛յ սարսափելի սրիկայ :

Ու պատկառելի բժիշկը , քանի մը վայրկեան զուլսը ճանկերուն մէջ ճեղքմտութեամբ յետոյ ըսաւ . «Ա՛խ , ի՛նչ քաշեցի պատասխիկ մը թուղթի վրայ նշանակուած անուններէ» : Այդ անուններուն մէջ կարգացուած է Գարբիէլ Նորատունկեանի անունը : Ան ալ կոչուած է վկայութեան , բայց վսեմաշուքը կարկամ պատասխաններ տուած է եւ բժիշկը նորանոր դժուարութիւններու բախած :

— Ա՛խ , հոգիս ելաւ այդ պատասխիկին համար , ըսաւ Տօքթօրը : Տարակով մէճիտիչները , որոնք ի սկզբան հայ գրագէտի մը ողորմութեան պէս տրուած արգահատանքի մը երեւոյթը ունեցած էին , հարցարանէն արձակուած լոյսին մէջ խոստացուած վարձատրութիւնը կըլլան պարզապէս , եւ այսպէս կարգ մը կէտեր որոնք անդիտակցօրէն գրուած են անցիպէս , կը լուսաւորուին ըզեզիս անկիւններուն մէջ :

Առաջին հարուածը Արեւելի վարչութիւնը տուաւ բարեկամիս՝ անոր մտտքը յաւիտեան փակելով իրեն՝ գրախարհի դուռը պէս : Այն ատեն մենք , «պահպանողականի ու աղատականի» տարբերութիւնով բացատրեցինք այդ պարագան , բայց զէպքերը յետոյ նոր լոյս բերին ու տարբեր հաստատութիւններ տուին : Արեւելի վարչութիւնը , անվստահութեան առաջին նշանը տեսածին պէս , ալ չէր հանդուրժած որ իր թերթին մէջ ուղղածին պէս տարածուի Արփիար Էֆէնտին :

Այս ատտանումներուն մէջ առջի օրէն , իմ կարծիքս եղաւ հեռացնել զինքը , յանձն առնելով իր ճամբու ծախքն ալ : Բաշալեանին գրեցի

կարգ մը բաներու հետ , եւ այսօր ալ , ուր անազին խորամաս մը հետեւեալ կը շարունակուի իմ անոր մէջ . — Ի պատիւ Լեւոնին — չեմ վարանիլ ըսելու որ ինձի գրեց , թէ «Բարեկ թող գայ ու ինձի հետ կիսէ այն հացին կտորը որ շան մը բաժինն է ու շան մը պէս կուտամ Բարեկի մայրութեան վրայ» : Եւ սակայն , Արփիար Էֆէնտի մէկ պատասխան ունէր . «Ա՛խ , մա՛յրս , մա՛յրս» :

Հազար բուպիլի խնդիր մըն ալ քանիցս նիւթ եղաւ մեր երկուքին մէջ : Դրամը աւանդ մըն էր . ես կը պնդէի որ աւանդը իր ուղղածին պէս խառնելու իրաւունք չունէր : Նորէն գրեցի Բաշալեանին , կրկին գրեցի ու պատասխան տուի թէ պիտի կարգադրուի : Ինք , Արփիար Էֆէնտի , յուսահատի վերջնական պատասխանով ըսաւ թէ պիտի ջանայ ես զարձնել զուճարը Գր. Արծրունիի՝ որ այն զուճարը տուած էր իրեն ո՛չ յանձնէ : Այդ միջոցներուն՝ ծանօթ բարեկամ մը , որ իրեն այ ինձի չափ ծանօթ ու մտերիմ էր մէջտեղն ելաւ ու ըսաւ որ օձիքը թող սամ գոնէ ժամանակ մը , ու դուրսն եկած ձայններուն ահանջ չկատարուի : Ես թոյլատու եղայ , բայց բուպիլները , կալաթայի սեպտեմբերներուն քով սոկի դրամի վերածնունդով , բարեկամիս ազիքներուն մէջ կարագ իւզի պէս հաղեցան :

Հարցարանէն դուրս ալ , ուղղակի կամ անուղղակի ճամբաներէ , լոյսի շտապիչներ եկան՝ անցեալին մշուշապատ կէտերը լուսաւորելու : Օր մը , 1895ին , Ա. Վ. Արփիար Էֆէնտիի մտերի բարեկամ , իրեն բանասակից , իր մէկ մտերմին , սրասկիցին ներկայութեանը յայտնեց , թէ Արփիար Էֆէնտի շատ խղճաւոր էր վահարած պէշի հոմար : Գաղանի հառաչանքներ կարձակելու միշտ : Այն ատեն ահա , սատանի պէս , միաքս եկաւ բարեկամիս վարանոտ ու յորթի վիճակը , թէ ի՛նչպէս , իր արձակմանը ատեն , երեք չորս ամիս , ամէն օր վտարի շոգեառներուն մէջ էր . Պէտքիք-Տէրէ ծառերուն ու թաւուտներուն տակ մինաւոր ժամեր անցուց , որչափ որ հնար էր փակելով ընկերութիւնէ : Ու միտքս ակամայ ստիպուեցաւ հետեւեցնել թէ ատտեք ապաշխարութեան օրեր եղած էին Արփիար Էֆէնտիի տաղանայայտը խիղճը անդորրելու : Այդ ապաշխարութեան ժամերուն յիշատակը կարելի է գտնել Հայրենիքի մէջ . ուր Արսէն Գիւմրիսեանի , Դերվանդապետի այդ վկային առթիւ՝ բաներ գրած է բարեկամս : Ու ինձի քանիցս ըսած է . «Երանի՛ թէ Պետրոս Մարինեանի պէս ես ալ Աքեա երթայի : Բայց մա՛յրս , ա՛խ , սա մա՛յրս» , իրեւ թէ գրեցիները մայր ունեցած չըլլային : Այդ խօսքերը քնականարար , ինձի երբեմն անհասկնալի , այսօր լոյսի մէջ են . «ա՛խ , մա՛յրս , մա՛յրս» :

Եւ որովհետեւ այս երկուստարգիլն անունը , բարեկամիս բերնին մէջ տարբերութիւնով ծեծուելէ ու չարքիկուելէ ետքը , այսօր ալ հրապարակի վրայ է , պատմեմ ինչ որ լուսեցաւ յետոյ : Տրագիկոնէն գրուած նամակով մը կը հաղորդէ Պետրոս Մարինեան թէ Արփիարը կուգայ Կովկասէն , Գրիգոր Արծրունիի ձեռքով իրեն տրուած է հազար բուպիլի եւ կարգ մը ուրիշ պատուէրներ : Նամակը ձեռք անցնելէ յետոյ , Մարինեան Պոլիս կը բերուի : Հարցաքննութեան ժամուն՝ Արփիար Էֆէնտիին զէմ առ զէմ կը կոչուի : Մարինեան , որ նամակին

գրոզն ու ստորագրոզն է կղած , անկեղծօրէն կը յայտնէ իր կարծիքներն ու համոզումները՝ միեւնոյն ժամանակ յայտարարելով իր յանձնառութիւնը օրէնքին բոլոր արամագրութեանց : Արփիար Էֆէնտի , նշանացի , բերնով ու քիթով , ճշմարտութեամբ յօնքերով , ճամածութիւնով կուզէ հասկցնել որ նամակին գոյութիւնը ուրանայ : Մարինեան , խմորով տարբեր գոյութիւն , զիջում չըներ , եւ մանաւանդ թէ յիմարութեան չէ՞ր ըլլար յայտնի , ապացուցական իրողութեան մը առջեւ Պոլսուտարի պէս ձեռքերը բււալ , ուստի , սատակի կը զայրանայ Արփիար Էֆէնտիին զէմ :

Արփիար ուզած է անհրաժեշտ իրողութեան մը առջեւ վարանիլ , ստեղ ցածօրէն , իսկ Մարինեան պարզապէս ընդունած է ամէն բան : Հետեւեալնք : Մարինեան Աքեա գնաց . իսկ Արփիար Էֆէնտի սկսաւ հառաչել անոր Լեւեւէն սո՛ք սո՛ք ու երանի սալ անոր՝ յաւիտեական յանկերգի մը պէս կրկնելով միշտ . «Ա՛խ , մա՛յրս , մա՛յրս» :

Մարինեան ԾԻ՛ն , Ալարեանի ջանքով , ներման արժանացած , Պոլիս կը գտնուի : Արփիար Էֆէնտի այցելութեան կերթայ ու զողոզալով : Չուրն ինկած հաւու պէս կծկամած , սենեակէն ներս կը սպրդի : Իր առաջին խօսքերը կըլլան ինքզինքը արդարացնելու բտտեր կատաչել : Մարինեան կըսէ . «Ես չե՛մ հասկնար , պարտն Արփիար . լաւ կընէք որ գուրս ելլէք» : Ու իր զգուսնքը ուրիշներու յայտնած է Արփիար Էֆէնտիի մասին :

Հիմա ինձի կը մնայ յիշեցնել Արփիար Էֆէնտիի որ ես չեմ կրնար քայլ տա քայլ իրեն հետեւել , չուղելով երեք քառակիցուցի խճճուտուքներու հետ ինձմէ կամ ինձմով ձայն մըն ալ աւելցնել ազգին մէջ : Ես կը հաւատամ , եւ փորձով ալ համոզուեցայ թէ ինչ որ երկի մութ էր , այսօր կամ վաղը լոյսի մէջ երեւան կուգայ : Ուստի իր երեքուկէս տարուան կատաչներն ու շատչները՝ ինձի նոր հաւատարմութիւն են՝ պինդ բռնելու իր մտանի ունեցած համոզումներս : Եւ երկու բան կայ որ յաւիտեան կը մերժեմ . — Հայրենիքի կէմ եղած երեւմեմ հալածանքը Պոլիսի մէջ եւ իր սպանութեան փորձը ուր զիս սենեկ ուզած է միշտ բարեկամս : Գաղանի տնգամ չեմ ներքի իմ անձիս : Կը բողբոքեմ նաեւ այն յայտարարութեան զէմ , որով զիս այս կամ այն յեղ կուսակցութեան մասնակից կը նշանակէ Մարտի մէջ : Ես չէզոք էի ու չէզոքեմ այսօր ալ , զրազած միմիայն պաշտօնովս ու ինձմով :

Չմոռնամ հոս սա զխողորմութիւնը աւելցնելու :

Արփիար Էֆէնտի , խոստովանաբար , շատերուս ըսած է թէ ինք բանաէն արձակուած է իր Տ. Ա. եղբորը կնոջը շնորհիւ , որ նախարարին ոտքն ինկած է : — Եթէ կատարութիւնը , Սուլթանի ընդհանուր ներումին մէջ , Արփիարը բանտէն չարձակուելու պէտքը կարեւոր տեսած էր , կնոջ մը զիբարտոս արցունքները չէին կրնար երեք ձեռք բերել թանկագին աղատութիւն մը , եւ ա՛տ ա՛լ քանի մը վայրկեաններու մէջ , պալատի հաճութիւնը չառած : Եթէ չորցած կնոջ մը անսիրտ պաղատանքն ու կեղծ արցունքները այդչափ ուժեղ էին , ինչու ուրեմն կշիռ չունեցան վահարած պէշի կնոջ , հրաշագեղ վասնային , երեք ամսուան անխնջ երթեկն ու սպա-


նող արցունքները . մանաւանդ պէտք է ինկատի ունենալ որ վանտան Չեխիւի փաշային , գերման-թուրք պաշտօնատարի մը ազդիկն էր , սիրելի , մէկ հատիկ ազդիկը . զանց կընեմ այստեղ վահարածի հօրեղբայրը , Տասեան Արթիւն փոշա :

Ա՛ռ , Արփիար Էֆէնտի , ա՛ռ ստանք ալ հազիր :

ՀՐԱՆԴ

ՔԻՐԻԼ ԵՒ ՄԷԹՕՏԻ

ՍԱԽ՝ ԵՐՈՒ ԼՈՒՍԱՒՈՐԵ՛Ց ԵՐԸ



Ի՞նչ որ սլաւ ցելերն ամէն տարի մայիս 11ին կը տօնեն իրենց երկու լուսաւորիչներուն փառաւոր յիշատակը :

Տասնութերորդ դարէն ի վեր ռուս և օտարազգի պատմագէտներ շատ բաներ գրած են Քիրիլ և Մէթօտի մասին . բայց այդ անկեղծութիւնները լեցուն են հակասութիւններով և վճապէս որոշուած չէ թէ այդ երկու եղբայրները հելլէն թէ սլաւէն : Գանի մը հետախոյններ փաստերով կը հաստատեն թէ սլաւ ցեղէ մը ծնած էին անսնք . Իրենց հայրը ծովազերեայ քաղաքի մը — Սօլունի ազնուականներէն էր և Բիւզանդիոնի կայսրութեան մէկ առաջնակարգ զինուորական պաշտօնատարը :

Մէթօտի ծննդեան թուականն անյայտ է , իսկ փոքր եղբայրը , Կոստանդին , որ յետոյ իրեւ վարդապետ Քիրիլ կոչուեցաւ , ծնած է 827ին : Հօրը մահուանէն յետոյ՝ Կոստանդին 15 տարեկան էր երբ Բիւզանդիոնի կայսրը Թէօփիլոս մեռաւ , և կայսրութիւնը կը կառավարուէր երեք խնամակալներու ձեռքով , որովհետեւ զահաժառանգը , Միքայէլ , զեռ շատ փոքր էր : Երեք խնամակալները Կոստանդինի վրայ գովեստներ լսելով Պոլիս կանչեցին զայն՝ փոքրիկ կայսրը ընկեր և բարի օրինակ ըլլալու համար : Կայսրութեան կայսրական վարժարանի մէջ քիչ ժամանակէն թուարանութիւն , փիլիսոփայութիւն , աստեղագիտութիւն և ուրիշ բնական գիտութիւններ սորվեցաւ և իր վարժապետները հիացուց : Սլաւերէնէ և յունարէնէ զատ զիտէր նաև լատիներէն , ասորերէն , հայերէն և Խաղարներու (Խրիմ) լեզուն : Պալատականներու թախանձանքին հակառակ չընդունեց կայսրութեան ունե պաշտօն և վարդապետ ձեռնագրուեցաւ :

Իսկ Մէթօտի անական ընտիր կրթութիւն մը ստանալէ յետոյ , զինուորական ծառայութեան մէջ մտաւ և մօտ 10 սարի Սօլունի մօտ յունական սլաւ դատաւ մը կառավարելով՝ 851ին մահմետականներու զէմ յայտը պատերազմ մը մղեց : Ընտոյ Քիրիլ և Մէթօտի երկու լղբայրները

միացան և որոշեցին աշխարհա-
յին ունայնութիւններէ հեռա-
նալ : Ողբմալս լեռը վանք մը
քաջուեցան՝ հոն իրենց օրերը
ազօթքով և սրբութեամբ անցը-
նելու համար : Հոն է 55 ի տուն-
ները առաջին անգամ մասնակցին
իրենց մայրենի լեզուի տառերը
յօրինել և սուրբ գրութիւնները
թարգմանել : Քիրիլ յոյն և լա-
տին գրերու նմանողութեամբ
կարգաւորեց ոչաւ տառերը և
սկսաւ աւետարանէն՝ ինչպէս նա-
և ուրիշ եկեղեցական գրուած-
ներէ հատուածներ թարգմանել :
Սակայն 858 ին Միքայէլ կայսրը
զիրենք այլևայլ սլաւոնական եր-
կիրներ ուղարկեց քրիստոնէա-
կան հաւատքը քարոզելու հա-
մար : Իսկ 862 ին Մորաւիոյ իշ-
խանը տեսնելով որ Մակեդոնիա
և ուրիշ կողմեր կրօնքը և գրա-
կանութիւնը հակաքրիստոնէ
ուղղութենէ խնդրեց Միքայէլ
կայսրէն և Պոլսոյ փօթի Պատ-
րիարքէն որ երկու եղբայրները
իր երկիրը զրկէ, որպէս զի գեր-
մանացի կրօնականներէն աւելի
անկեղծ սրտով քարոզեն իր ժո-
ղովրդին : Քիրիլ և Մէթօսի ճամ-
բայ ելան և Պուլկարիոյ մէջ Պօ-
րիս թագաւորին պատահեցան ու
յաջողեցան համուզել զինք որ
քրիստոնէութիւնն ընդունի : 864
ին Պորիս մկրտուեցաւ և պուլ-
կար ազգին մեծ մասը քրիստոն-
եայ դարձաւ : Միայն սուղանին
քիչ մը հակառակեցաւ այս նոր
հաւանաւորութեան, բայց անոնք
քիչուր էին և Պորիս յաջողեցաւ
բռնի մկրտել զանոնք :

(Շարունակելի)

ԱՆՁԱՏ ՆԻԻԹԵՐ

—(—)

Սպանո-ամերիկեան պատերազ-
մին սկիզբները, Մ. Նահանգնե-
րուն հայերը հարցով մը զբա-
ղեցան, թէ իրենք ալ մասնակ-
ցելու էին այն աղնիւ դատին
իրականացմանը զոր եանքիները
կողքին ձեռք բերել՝ դարաւոր
անտարբեր հանդիսատեսութեան
զաղբելով մէկէն ի մէկ : Ասոր
համար, Պոթթոնի մէջ ապրիլի
վերջերը ազգ. լսարանին մէջ
400է աւելի հայեր կը հաւաք-
ուին, և օրուան նիւթին վրայ
զանազան անձեր բանախօսու-
թիւններ կարտասանեն : Էնտոյ
բունն փեճարանութիւն մը կը
բացուի հայոց կամաւոր զինուոր
արձանագրուելու մասին : Երե-
զիրը քուէարկութեան կենթար-
կուի և սա որոշումը կը տրուի
բացարձակ մեծամասնութեամբ :

1. «Պոթթոնի և շրջակայ հա-
յեր» ժողովուած Բալէտոնեան
սրահին մէջ, միաձայնութեամբ
կը դատապարտենք սոյանիական
կառավարութեան յոռի վարչու-
թիւնը Քուպաի մէջ, և մասնա-
ւորապէս անոր բարբարոսական

ընթացքը հանդէպ ոչ-ապստամբ
Քուպայիներու որոնք մեծ մա-
տով կիրներ ու մանուկներ են :

2. «Կը փափագինք մեր հիւ-
ցումը յաւանել Մ. Նահանգաց
կառավարութեան որ չհետեւելով
Եւրոպիոյ շահամուտ տէրութեան-
ներու օրինակին, մարդկութեան
համար իր բանակն ու տորմիզը
զէնքի կանչած է Քուպան աղա-
ւելու :

3. «Իբրև սիրող աշատ քաղա-
քակրթութեան և իրրև ամե-
րիկեան քաղաքացիներ կը յայտ-
ենք մեր յօժարութիւնը՝ մա-
տուցանել ինչ ծառայութիւն որ
կրնանք այն մեծ դատին յաջու-
ղութեանը որուն Մ. Նահանգաց
կառավարութիւնը արդէն ձեռ-
նարկած է » :

Մեր հիացումն ալ մեր այս
աշուտախոհ ու քաջասիրտ ազ-
գակիցներուն որոնք շատ հեւի-
կն նմանելէ ան կարգ մը սխ-
տավարակ թուլամորթ արարած-
ներուն որ վատատրուութիւն կը
քարոզեն ժողովուրդին :

Լսնաոնի ամերիկեան լրագիր-
ներուն անուանի թղթակիցը Պ.
Ճուլլըն Ռօթթ «ՀարփըրսՄընթլի»
հանդէսին մէջ «Արթնցած Ռու-
սիան» խորագրով յոյժ շահեկան
տեսութիւն մը ըրած է՝ վերջին
տարիներու մէջ Ռուսիոյ անտե-
սաշան ու զինուորական անհուն
առաջըլիմութեան մասին :

Այս յօդուածին մէջ ամերի-
կացի թղթակիցը սա կարծիքը
կը յայտնէ հայկական կոտորած-
ներուն աւերակ Ռուսիոյ ցուցու-
ցած անտարբերութեան պատ-
ճառներուն վրայ :

« Հայկական կոտորածներուն
ատենը Ռուսիա բացարձակ հա-
կառակեցաւ Եւրոպաի՝ Սուլթանը
ուղղելու կամ հայոց տանջանք-
ներուն վերջ տալու շարժման :
Ռուսիոյ այս հակաքրիստոնէա-
կան ընթացքին շարժառիթը ինձ
տարօրինակ կը թուէր, մինչեւ
որ այս ձեռք Անգլիոյ վրայ
լեւով տեսայ որ Ռուսիա մեծ
թուով հայ հպատակներ ունի ու
որոնք ապագայ ստոյգ անկախու-
թիւն մը կերպով են, որոնք կ'օղ-
նեն իրենց Թուրքիոյ ազգակից-
ներուն աղմուկ ու շարժում հա-
նելու համար և որոնք Չարին
հպատակներուն մէջ աննշան
տարբեր ըլլալէ շատ հեռի են,
այսինքն անոնք դրամի արժէքը
և արհեստի զօրութիւնը աւելի
լաւ գիտեն քան իրենց դրացի-
ները, ըլլան անոնք Ռուս, Պար-
սիկ, Հրեայ կամ Յոյն : Ան առեն
համաշուկայ թէ անկարելի է
Ռուսիոյ նման այնչափ մեղապե-
տական ու մեկուզմանի զաղա-
փարներով կառավարուած պե-
տութիւն մը թող տայ որ Թուր-
քիոյ հայերը իրենց վիճակը բա-
րելաւեն, ինչ որ կրնայ Ռուսիոյ
հայերուն նեխանալ շարժել » :

Յետոյ տնտեսական խնդիրներ

րու վրայ խօսելով, յօդուածա-
գիրը կը կարծէ որ հայերը այդ
երկրին էն ճարպիկ տարրը կը
կազմեն :

« Հայ որբանոցները » խորա-
գրին տակ «Տէյլի Նիւս» հետեւ-
եալ տողերն հրատարակած է .

«Ապրիլ 28 ին Էքզէթըը Հօլի
սրահին մէջ տեղի ունեցաւ
«Մատուածաշնչի երկիրներու մի-
սիոնարներուն օգնող ընկերու-
թեան» 24րդ սարկան զուսա-
րումը, նախագահութեամբ լորտ
Քիննեթտի : Ընկերութեան ջան-
քերն եղած են եղբր զլսաւորա-
պէս հայ սրբերը հողալ ու ան-
զացի «աւետարանի աշխատա-
ւորներուն» օգնել : Ընդհանրա-
պէս խօսելով հայ որբանոցնե-
րուն զորքը լաւ կարգի դրուած
է . ամէն որբանոց իր որոշ նը-
պատի ազրիւրներն ունի : Ա-
նոնցմէ մէկ քանիին պահպանու-
թիւնը վերջնապէս յանձն առած
են Չուիցերիոյ նպաստամտոյց
յանձնաժողովները . իսկ միւս-
ները կը հողացուին Գերմանիոյ,
Ամերիկայի և Անգլիոյ յանձնա-
ժողովներուն հայթայթած մի-
ջոցներովը : Ամերիկեան Պորտ
ընկերութեան պահած որբանոց-
ներուն մէջ երեք հազարէն աւելի
պատուարեալներ կան և ասոնց
կը բաժնէ յիշեալ ընկերութիւնն
իր հաւաքած գրամները : Քրիս-
տոնէութեան այս սաները՝ հայ
որբերը, մաշուած ու վերքերով
ծածկուած վիճակի մէջ կը մըր-
նեն որբանոցները և զգալի կեր-
պով կը փոխուին և կաղէկնան ի-
րենց ստացած խնամքին շնոր-
հիւ : Ընկերութիւնը անցեալ
տարի 2,700 անդլ. ոսկի հաւա-
քեր է, որուն 1,050ը ծախսեր է
հայ որբերու համար, 360ը Փոքր-
Ասիոյ աւետարանաւան զորքին
տարածմանը, իսկ մնացած զու-
մաբով օգնեք է ուրիշ երկիրնե-
րու կարօտեալներուն : Ներկայ
դարու մէջ և ևս ընկերութիւնը
իր զլսաւոր հողածութիւնը պի-
տի նուիրէ հայ կոտորածի որբե-
րուն » :

ՆԱԽԱՏԻՆՔ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԻ ՄԻ

—(—)

Կաթողիկոսական այցելու հո-
վիւ Տ. Արսէն վարդապետ, որ
կանոնաւոր անցագրով Ռուսա-
նիայէն կանցնէր Աւստրիոյ հա-
յերուն այցելելու համար քիբ-
ճօվաէն եւ գարձուեր է Ռուսիան
իշխանութիւններու կողմէն՝ բը-
ճախնդիը հարցաքննութեանց և
կողմի վարմունքներու ենթար-
կուելէ ետքը : Ռուսչուքէ զըր-
կուած անտարագիր նամակ մը,
որ ճամբորդը Արսէն վարդապե-
տին անուան և տարազին ներ-
քեւ ապաստանած վտանգաւոր
յեզափոխական մը կը ներկայա-
ցընէր, պատճառ եղբր է Ռու-

ման ոստիկանութեան այս ըն-
թացքին :

Չարմանալին ան է որ Տ. Ար-
սէն վարդապետին խկութիւնը
հաստատուելէն ետքն ալ, ինչ
որ, աւելորդ է ըսել, անմիջա-
պէս տեղի ունեցած է, ոստիկա-
նութիւնը փոխանակ ներդու-
թիւն խնդրելու, ինչպէս վայել
էր քաղաքակրթուած երկրի մը
ոստիկանութեան, իր կոշտ վար-
մունքին մէջ յամառած է, ա-
ռանց գէթ ստահակի մը մէկ
գուհիկ խաղին զոհ գացած ըլ-
լալու ողորմելիութիւնը դարմա-
նելու : Ամէն պարագայի մէջ, իր
պաշտօնին կիրառութեան մէջ ե-
ղող հայ եկեղեցականի մը, մա-
նաւանդ կաթողիկոսի ներկայա-
ցուցչի մը եղած այս նախա-
տինքը մեր ամենուս զայրոյթը
և նողկանքը կը գրգռէ հանդէպ
կառավարութեան մը, որ իր
թրքասիրութենէն կուրացած,
ստորին պնակալէզի մը փութիւ-
տութեամբ, մահիկին սիրոյն հա-
մար քրիստոնեայ եկեղեցիի մը
պաշտօնեան կանարգէ, ճշնա-
ճամբ օրերու մէջ իր դռները
փակելէ ետքը նոյն ազգին հա-
լածուած զաւակներուն :

Ռուսիոյ հայերուն կը թող-
ուի Ռուսիան ազգին տեղեկագրել
իրենց ներկայ վայրենի կառա-
վարութեան այս նոր շահատա-
կութիւնը :

ՔՐՈՆԻԿ

—(—)

Հայրապետին վերջերս կովկաս
ըրած այցելութիւնը արդ իւնա-
ւոր հետեւանք մը ունեցած է
ուստահայ գաղթոցներու համար :
Մեծ յոյս կայ որ կրթարանները
քիչ մը բարեփոխուած ծրագրով
վերջնականապէս վերաբացուին
ներկայ ամսոյ մէջ :

Պոլսոյ Բաղ. Ժողովը Պուլ-
կարիոյ ազգայիններուն անհովի-
մնացած ըլլալը և տեղոյն եկե-
ղեցական գործերուն անխնամ
վիճակը նկատողութեան առնե-
լով պէտք զգացեր է հոգեւոր
հովի մը կարգել և որոշեր է
խնդիրը Խառն ժողովին նկատ-
առմանը ենթարկել :

Հապա Վեհուհին :
Վանայ Առաջն. Տեղապա-
հին տեղեկագրէն կը տեսնուի
թէ Աղբակայ Թագէտու Բարթո-
ղիմէոս վանքը ինչպէս նաև
Վանայ մէջ գտնուած ուրիշ հե-
ռաւոր վանքերը ցաւալի կացու-
թեան մէջ կը գտնուին զլսաւո-
րաբար թրքական վերջին ա-
ւազակութեանց պատճառով : Ի
լրումն աղետից եկեղեցականներն
ալ կը պահուին այդ վանքերը
մատակարարելու յօժարող. զըտ-
նուածներն ալ իոյս կուտան պաշ-
տօնէ : Կրօն. Ժողովը միտք ունի
այդ կարգի ցաւալի կացութիւն-
ներու դարման տանիլ և թէ Պուլ-

սոյ մէջ կուտակուած անթիւ վե-
զարաւորները յօժարին թողուլ
Վասիորի համալսարան արեւելքը :

Օրմանեան Պատրիարքը
Պոլսոյ և արտասահմանի մեծա-
տուններուն յատուկ գրութիւն-
թիւները ուղղելով, կոչումը բեր
է անոնց բարեօրոշման և
նպաստ խնդրել է գտնուած որ-
բանոցները պահելու և նորեր
հաստատելու համար :

Վրաստանի մահուան դու-
ժը առնելով Սօֆիայի հայ գաղու-
թին կողմէն պատուիրակութիւն
մը Տ. Արիստակէս Հօր առաջնոր-
դութեամբ տեղւոյն անգլիական
ներկայացուցիչ Պ. Էլիօսին դիմել
է հայ աղբիւն ցաւակցութիւնը
յայտնելու ճիշտած ժողովուրդ-
ներու այս պերճախօս պաշտպա-
նին կորստեան համար : Յաւակ-
ցութեան նոյն ցոյցերը եղած են
նաև Պուլիարիոյ ուրիշ հայա-
բնակ քաղաքներու մէջ :

Նիւ-Եորքի այլ և այլ դօ-
րագունդերուն հայերը զէնքի
կանչուել են :

Մեծ Եւրոպայի հանրա-
յին գործունէութեան երկարու-
թիւնը բնութենէն համար բաւա-
կան է աչքի առջև ունենալ
պատմական գէպերը որոնք տե-
ղի ունեցած են իր ապրած մի-
ջոցին : Անհամար են անոնք :
1832ին առաջին անգամ երես-
փոխան ընտրուած ատեն Վիդ-
թորիան տակաւին թագուհի շէր
եղած, չորս տարի եւս պէտք էր
իշխէր Կիլոմ Գ. : Պեղծիոյ ան-
գրանիկ թագաւորը, Լէսուրոյ,
նորեկ մըն էր, և հազիւ թէ յի-
զափոխութիւնը Լուի Ֆիլիբեր
նստեցուցած էր Յրանսայի դա-
հուն վրայ : Գերմանիոյ արդի
վեհապետին պապը՝ երեք թա-
գաւորներու պիտի յաջորդէր :
Դեռ երեսուն տարի պիտի անց-
նէր որպէս զի եւրոպեան արդի
վեհապետներուն երիցադոյնը՝
Դանիոյ Քրիստիան Թ. թագա-
ւորը գահը ելլէր : Ռուսիան Նի-
կոլա Ա. կայսեր ձեռքով կը կա-
ռավարուէր. և արդի Չարին
պապը, Պուլիարիոյ աղատարարը,
աղեկ մըն էր : Այն ատենուան
Իտալիոյ թագաւորը Քառ-Սլոպէն
էր և Վիդթոր-Էմմանուէլ տակա-
ւին հոյ կը գարձուէր :

Վատարեալ Քրիստոստուր Ղա-
զարոսեան մը այս կ'ըստադոնը :

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—)(—

Անցեալ կիրակի առտու Պոլսոյ
մաքսատան քարափը կերեւայ թէ
օդերու ջերմութեան պատճառով
լողանք մը ընել ուղեւով, սկսել
է ջուրին տակ իջնել և իրիկ-
ուան ժամը 11ին Սիւրբ Եփեմ
մի քարափին հետ ձեռք ձեռքի
տուած, բոլորովին ջուրին տակ
անհետացել է :

Այս շարահիճի քարափը եր-
բորդ անդամն է որ այս խաղը կը
խաղայ ընկերութեան որ 120,000
սփիէ աւելի ծախած էր այդ
ծովամայն քարափին հա-
մար :

—Ոստիկանութիւնը, Քնիւ-
ժէփօի մէջ, Պ. Հաճիէնօփի ալ-
քօլի գործարանին ետին, խեղ-
դուած և ապա թաղուած ման-
կիկի մը զիտիլը երեւան հաներ
է : Կը հուսատեն թէ այս հէգ
փոքրիկը նոյն գործարանի տնօ-
րէնին ու իր 18 տարեկան աղ-
ջկան մէջտեղ եղած հրէշային
յարարելութեան մը պատուը ե-
ղած ըլլայ : Իրենց առաջին ու-
ճիւրը ծածկելու համար է ան-
շուշտ որ այս երկրորդը գործած
են : Ըննյաւորները—հայր և
աղջիկ—արգէն ձերբակալուած
են : Նմանօրինակ դէպք մըն ալ
տեղի ունեցած է Սմբրիկալի
Նիւ-Հէյթը քաղաքին մէջ հայու
մը կողմանէ : Աղջիկը հինգ տա-
րեկան էր : Այս ճիւղը հայրը 15
տարեան բանտարկութեան դա-
տապարտուած է :

—Պոլսոյ մէջ զրոյց կը շրջի
թէ վերջին հրդեհի պահուն այ-
րած մղիկի մէջ մեծ քանա-
կութեամբ զէնք գտնուել է :

—Պուլիարիան Պիլիպիւս Լրա-
գիրը կը զրէ թէ Տէչքօ Պօլշէֆ
որ Աննա Սիմօնը ուղանն : Ըլ-
լալուն համար մահուան գատ-
պարտուած էր, Իշխանին աւեր-
սագիր մը զրկելով մահուան պա-
տիժին՝ մշանջեանական բռնի ոչ-
խառութեան փոխու իւր կը լնդ-
րէ : Այս ազերսագիրը ասորոյ-
րուած է նաև Սօֆիայի բարձրա-
դոյն դպրոցին աշակերտներուն
և Ֆիլիպիի գաւառական զեզա-
ցիներուն կողմէն :

—Յունթրքական վերջին պա-
տերազմին մասնակցող Պալլըքի
թուրք երիտասարդ կամուրթ մը,
իւր հայրենիքը վերադարձած
պահուն Վօլօէն յոյն աղջիկ մը
ստեղծանդեւով Պալլըք տարեր է
իւրեւ պատերազմի կողոպուտ :
Հէգ աղջիկը Ալէքսանտրա խիտա
հոկոզութեան մը ենթարկուած,
միայն վերջին օրերս կը ցեր է
հասկնալ թէ քրիտոստոնէայ երկրի
մէջ կը գտնուի և յաջողք է
գրացուհիի մը միջոցով լուր
զրկել ոստիկանութեան, որ փու-
թացեր է զինքը ազատել Պալ-
լըքի Բարիսին ճանկերէն : Ան-
տար վրայ, Վառնաի թուրք հիւ-
պատուը նօթա մը զրկելով պուլ-
կար կառավարութեան, կը բու-
ղբէ և կը պնդէ թէ իսլամու-
թիւնը յօժարակամ ընդունող մը՝
բռնի քրիտոստոնէութեան վերա-
դարձուած է :

Մեզ կը հաղորդեն թէ տեղւոյս
թագական խորհուրդը իր անօրի-
նութեամբ եկեղեցիէն արտաքսուած
Տ. Գեորգ քահանային խնդրին հա-
մար ոստիկանութեան դիմել է :

—)(—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սպանտմերի կեան պատերազմը
վերջին օրերս Սպանիացոյց քիշ
չատ նպատաստը կը բարձրանք մը
աւած է : Ամենուն աչքը Մէր-
վէրա ծովակալին վրայ էր որ Կա-
նանջ Հրուանդանի կղզիները ա-
պաստանած մերթ ֆոտիքս դառ-
նալ և մերթ ֆոտիքս կղզի-
ները երթալ կը ձեռացնէր և
չատ անգամ ալ իր հետքը բոլ-
րովին կորսնցնել կուտար : Այս
աւազակտական միջոցներով
Մէրվէրա յաջողած է իտալեւ ա-
մերիկեան նւաւորմը և անց-
եալ ամսոյ 27ին Կանանջ Գլխէն
մեկնելով, երէկ շաբաթ ճանա-
պարհորդելէ Ետքը ողջ առողջ
Քուպաի Սանդիակօ նաւահան-
դիտա հասած է, առանց ամն-
րիկեան ու է նաու մը գլխադ-
րութեան հանդիպելու : Ճշմա-
րիտ է թէ Մէրվէրա ծովակալին
յաջողութիւնը ամբողջական պի-
տի ըլլայ միայն երբ կարենայ
ճալմանաի նաւահանդիտը մրտ-
նել, և սակայն Քուպաի ջուրե-
րուն մէջ սպանիական նաւաւոր-
մի մը ներկայութիւնը իր սրոյ
կարեւորութիւնը ունի : որովհե-
տեւ ամերիկացիները իրենց
չարժամեանուն մէջ առաջուան
չար ազատ չի պիտի կրնան ըլ-
լալ այնտեղ :

ԹՈՒՐԻՒՄ ԵՎ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Թեալիոյ գրաւման գօտիները հե-
տզեաէ կը պարպուին թուրք զին-
ւորներու կողմանէ, և երկրները
կը յանձնուին յոյն իշխանութեանց :
Ցաւալի է ըսել որ յոյները յետա-
մնաց քաջագործութիւններ կը փայ-
լեցնեն այս ատիւ : Գալապոզի
մէջ թուրք զինուոր մը սպանուել
է յոյն զինուորի մը ձեռքով : Թրի-
քալաի մօտ գտնուող Լիճիօ թրքա-
կան զիւղը կրակի սրուել է յոյնե-
րու կողմէ :

—Օսմ. Պանդան հանդարտեցնելու
համար թուրք կառավարութեան
սիրտը—որ օր մը առաջ զեպանու-
րուն զիմած էր պատերազմական
սուգանքին ու շանտուան համար ա-
նոնց ու շարքութիւնը հրաւիրու-
ածնայ 20ին իմացուցած է Գրան թէ
այդ աւելանքին առաջին վճարումը
առացած է :

—)(—

ՀԱՐԵՈՒՄ ԾՐ

Խմբագրութեանս գանդատներ և
զած են թէ Սիլվատրէի վայժարան-
ներուն ի նպաստ յունուար 1ին կա-
տարուած վիճակահանութեան ար-
զանքը կարգ մը շահողներու չէ
յանձնուած :
Իրաւ է :

ԻԼԱՆԸ ՐԵՍՄԻ

Վառնա վե Լիթիֆ քէոյլրուէ Իրան
տէլէթի թէպատարնա պուլուան
բաղդիթու զէվաթա պիլաիլիլի քի.
Մայիս այնուա քէնտիլէրի շախն
վէ ևաթա օրմարուղը հալաէ վէքեա-
լթիլն բաղար կիւնլէրի էօյլէնաէն
սեղրա ւահաթ 1տէն 5է գասար գօն
սօրոսանէյլ թէլլիֆ խոնպ, էլլէ-
րիւնաէ օյան էլլազարը թասաի վէ
իսիլէրիլի քի թիւկ թիլաէրիւնէ
գայա իթաիլիլի արլէր :
Վիս Գեւալլա քր Բեքս
Վառնա, Գ. ուշա, ուլլիցա Տէպ-
րքա Ե. 66 :

ՃԱՇՅՐԱՆ ԵՎ ԶՈՍԱՐԱՆ

ՀԱՃՆ՝ ԲԱՆԱՒՈՐՆ ԺԵՐԴ ԴԵՄԸ
Կը բանեցուէ Պ. Տիգրան Թիլիֆիկի-
անաւ և ընկ'ր

Արհեստին մէջ կատարելութեան հա-
սած երիտասարդ հայու մը ձեռամբ
ստորուած այս հովասուն, մաքուր
ու զեղջական հաստատութիւն ոչ մի-
այն պատիւ կը բերէ հայ ճաշակին,
այլ և մեծ խթան մը կը ըլլայ որ հայ
ու օտար փոփոկակերներ իրենց գոր-
նանային ու ամանային ժամադրա-
վայր մը բնեն զայն զրօսնելու և
ճաշելու : Պոստսեան արտօմարեր
հովիտուն ու Սեւ ծովի կապոյտ տա-
րածութեան առջև :

Հակառակ այս հրապուրիչ առաւե-
լութիւններուն, յաճախորդները պի-
տի գտնեն յոյժ զիրաւանաւելի գի-
ներ թէ բնակիլքի թէ կերակուրնե-
րու մասին :

ՊՕՐՍԱ

Վառնա 16 Մայիս
ՊՈՒՂՏԱՅ
Վազօն, լիպրա 47—51, հէքթօյ
11.20—12 ֆրանք
Արապա, լիպրա 47—55 հէքթօյ
11—13.10 ֆրանք
ԱՐԲԱ
Լիպրա 38—40 հէքթօյ 5.90—6
ֆրանք

ՄՐՍՐԸ

Վազօն, լիպրա 57—58 հէքթօյ
7—7.50 ֆրանք
Արապա, լիպրա 57—60 հէքթօյ
7.80—8 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵՍ

100 օգրասը 15—20 ֆրանք՝ մալ
կէօթ
Առապա մուսիլէթի նարօլոն 21
ֆրանք հիւսպը իլէ սիր.
Կիւնաէ 1—2 վազօն վէ 15—20 ա-
րապա պոգասայ, 3—4 արապա արբա,
կէլմէքաէ սիր :

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԱՆ

Կ Ո Շ Կ Ս Կ Ա Ր
Մուսալլա, հաճի Հասան աղաի
օթէլին տակ

Ճաշակաւոր, տիկուն, ձեւաւոր
կողիկ շինել տալ ուղղոր պէտք է
դիմէ Պ. Ստեփան Խօրասանճանի
որուն ճարտարութիւնը մէկ վոր-
ճով երեւան կիլլայ :

Գիներ զիւրամտչելի :

Печатница „Взаимность“ Варна.